ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅՆԹԱՊ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այնթապ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Այնթապ, (0236) 6-05-06, Ayntap_hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019 թվականի N 24

ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի դրույթներով. **համայնքի ավագանին որոշում է՝**

Հաստատել Այնթապ համայնքի թիվ 7 հերթական նիստի օրակարգը՝

1.Այնթապ համայնքի 2020թվականի տեղական տուրքերի, վճարների տեսակներն ու դրույքաչափեր սահմանելու մասին :

2.Այնթապ համայնքի 2019 թվականի տարեվերջի գույքագրման արդյունքների ամփոփման և օգտագործման համար ոչ պիտանի գույքը դուրս գրելու մասին:

3.Այնթապ համայնքի բնակիչ Հերմինե Ոսկանյանի դիմումումի քննարկման մասին:

4.Այնթապ համայնքի ղեկավարի աշխատավարձի, համայնքապետարանի աշխատակազմի, բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի հաստատման մասին:

5.Այնթապ համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի այլ նշանակության 0,01102 հա հողամասը ուղղակի վաճառքի կարգով օտարելու մասին:

6.Այնթապ համայնքի 300 տեղանոց մշակույթի տան տանիքի կառուցման աշխատանքները մեկ անձի գնման ընթացակարգով մրցույթ անցկացնելու մասին:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀՈՒՆԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ

ԹԱՄՈՅԱՆ ՇԻՐԻՆ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՍԵՅՐԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՀԱՅԿ

ՊԱԼԵՋՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅՆԹԱՊ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այնթապ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Այնթապ, (0236) 6-05-06, Ayntap_hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019թվականի N 25-Ն

ԱՅՆԹԱՊ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ, 10-րդ, 11-րդ,12-րդ, 14-րդ հոդվածների պահանջներով և <<Տեղական ինքնակառավրաման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետին համապատասխան. ***համայնքի ավագանին որոշում է՝***

Սահմանել Այնթապ համայնքի 2020 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀՈՒՆԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ

ԹԱՄՈՅԱՆ ՇԻՐԻՆ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՍԵՅՐԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՀԱՅԿ

ՊԱԼԵՋՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված 1
Այնթապ համայնքի ավագանու
2019 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 25-Ն որոշման

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այնթապ համայնքում սահմանել 2020 թվականի տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 15.000 /տասնհինգ հազար/ ՀՀ դրամ,

բ. սույն կետի ,աե ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 30.000 / երեսուն հազար/ ՀՀ դրամ,

500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50.000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ,

1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50.000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ,

3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 100.000 /հարյուր հազար/ ՀՀ դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝3.000 / երեք հազար/ ՀՀ դրամ,

20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 5.000 /հինգ հազար/ ՀՀ դրամ.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 3.000 /երեք հազար/ ՀՀ դրամ,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի ,աե ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի

1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ 5.000 / հինգ հազար/ ՀՀ դրամ.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 200.000 / երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ.

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 60.000 /վաթսուն հազար/ ՀՀ դրամ.

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 50.000 / հիսուն հազար/ ՀՀ դրամ.

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6.000 /վեց հազար/ ՀՀ դրամ,

26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 12.000 /տասներկու հազար/ ՀՀ դրամ,

50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 14.000 /տասնչորս հազար/ ՀՀ դրամ,

100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 21.000 /քսանմեկ հազար/ ՀՀ դրամ,

200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 45.000 /քառասունհինգ հազար/ ՀՀ դրամ,

500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 100.000 /հարյուր հազար/ ՀՀ դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6.000 /վեց հազար/ ՀՀ դրամ,

26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 12.000 /տասներկու հազար/ ՀՀ դրամ,

50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 14.000 /տասնչորս հազար/ ՀՀ դրամ,

100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 21.000 /քսանմեկ հազար/ ՀՀ դրամ,

200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 45.000 /քառասունհինգ հազար/ ՀՀ դրամ.

500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 100.000 /հարյուր հազար/ ՀՀ դրամ.

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում ,Առևտրի և ծառայությունների մասինե Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ 350 /երեք հարյուր հիսուն/ ՀՀ դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ 50.000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ,

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝100.000 /հարյուր հազար/ ՀՀ դրամ,

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ 500.000 /հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ,

դ. խաղատների համար՝ 1.000.000 /մեկ միլիոն/ ՀՀ դրամ,

ե. շահումով խաղերի համար՝ 500.000 /հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ,

զ. վիճակախաղերի համար՝150.000 /հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ.

10) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5.000 /հինգ հազար/ ՀՀ դրամ,

26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10.000 /տաս հազար/ ՀՀ դրամ,

50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15.000 /տասնհինգ հազար/ ՀՀ դրամ,

100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 20.000 /քսան հազար/ ՀՀ դրամ,

200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 30.000 /երեսուն հազար/ ՀՀ դրամ,

500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 50.000 / հիսուն հազար/ ՀՀ դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներառում՝

մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1.000 /հազար/ ՀՀ դրամ,

26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2.000 /երկու հազար/ ՀՀ դրամ,

50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4.000 /չորս հազար/ ՀՀ դրամ,

100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8.000 /ութ հազար/ ՀՀ դրամ,

200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15.000 /տասնհինգ հազար/ ՀՀ դրամ,

500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 25.000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ.

11) համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2.000 /երկու հազար/ ՀՀ դրամ,

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝3.500/երեք հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ,

գ. այլ արտաքին գովազդի համար՝ 1.500 /հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ,

դ. դատարկ գովազդային վահանակների համար՝ 375/երեք հարյուր յոթանասունհինգ/ ՀՀ դրամ,

ե. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ 150 /հարյուր հիսուն/ ՀՀ դրամ,

12) Հայաստանի Հանրապետության Այնթապ համայնքի խորհրդանիշը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 100.000 /հարյուր հազար/ ՀՀ դրամ.

13) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 10.000 /տասը հազար/ ՀՀ դրամ.

14) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝500.000 / հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ.

15)համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 2.500.000 /երկու միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ,

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 5.000.000 /հինգ միլիոն/ ՀՀ դրամ,

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 7.000.000 /յոթ միլիոն/ ՀՀ դրամ,

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝10.000.000 / տասը միլիոն/ ՀՀ դրամ:

16) համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառության իրականացնելու թույլտվության համար՝ օրացույցային տարվա համար 100.000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ:

17) համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար՝

ա. Կարաոկեի, դիսկոտեկի, բաղնիքի, սաունայի և շոգեբաղնիքի համար՝ օրացուցային տարվա համար համայնքի վարչական տարածքում՝ 20.000 ՀՀ դրամ:

բ. հեստապարային(ստրիպտիզ) ակումբի համար՝ օրացուցային տարվա համար՝համայնքի վարչական տարածքում՝300.000 ՀՀ դրամ:

2. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այնթապ համայնքում սահմանել 2018 թվականի տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը.

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 5.000 /հինգ հազար/ ՀՀ դրամ.

2)ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված՝ շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝30.000/ երեսուն հազար/ ՀՀ դրամ

3)ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված՝ աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝30.000/ երեսուն հազար/ ՀՀ դրամ.

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 5.000 /հինգ հազար/ ՀՀ դրամ.

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 20.000 /քսան հազար/ ՀՀ դրամ.

6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1.000 /մեկ հազար/ ՀՀ դրամ.

7) բնակելի նպատակային նշանակության շենքերում և շինություններում, կոշտ կենցաղային աղբի համար, աղբահանության վճարը սահմանվում է՝

ա)ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ 120 (մեկ հարյուր քսան) ՀՀ դրամ.

8)Ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում աղբահանության վճարը սահմանվում է ըստ շինության ընդհանուր մակերեսի հետևյալ դրույքաչափերով.

ա) առևտրի,հնարային սննդի և կենցաղային ծառայությունների մատուցման շենքերի և շինությունների մասով՝ 1 քմ. 100 (մեկ հարյուր) ՀՀ դրամ.

բ) հյուրանոցային տնտեսության օբեյկտների,տրանսպորտի բոլոր տիպերի կայանների (ավտոկայանների, օդանավակայանների, երթուղային կայանների)հանգստյան տների, բազաների ու ճամբարների,սպորտի համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ 1 քմ. 50(հիսուն)ՀՀ դրամ.

գ) վարչակառավարչական, ֆինասական, կապի, ինչպես նաև առողջապահության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ 1 քմ.15 ՀՀ դրամ.

դ)գիտական, կրթական, և ուսումնական նշանակության, սոցալական ապահովության,մշակույթի, արվեստի, կրոնական, պաշտամունքային, քաղաքացիական պաշտպանության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ 1քմ. 15 ՀՀ դրամ, իսկ զորանոցների հմար՝8 ՀՀդրամ:

ե)արտադրական՝ արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակության շենքերի և շինությունների (այդ թվում՝ ավտոկայանատեղի)՝ 1 քմ.15 (տասնհինգ) ՀՀ դրամ.

8.1Շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերի մասով՝1 քմ 100 ՀՀ դրամ

9) Ոչ կենցաղային աղբի համար, ինչպես նաև ոչ բնակելի տարածքների վերաբերյալ սույն հոդվածի 2-րդ մասի 7-8.1-րդ կետերով սահմանված դրույքաչափերի հետ անհամաձայնության դեպքում աղբահանության վճարը սահմանվում է՝

1) ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 3 000 ՀՀ դրամ, կամ

2) ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ 10.000 ՀՀ դրամ

10) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ 5000 / հինգ հազար/ ՀՀ դրամ փոխհատուցման վճար:

11) Այնթապ համայնքի մսուր-մանկապարտեզ հաճախող յուրաքանչյուր երեխայի համար վարձավճարը սահմանել 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ

11.1)Այնթապ համայնքում հաշվառում չունեցող յուրաքանչյուր երեխայի համար սահմանել 25.000 (քսանհինգ հազար) ՀՀ դրամ:

12) Այնթապ համայնքի տարածքում անասնաբույժի կողմից մատուցվող վճարովի անասնաբուժական ծառայությունների առաջարկվող ցանկը և գնացուցակը՝

12.1.Կենդանիների հիվանդությունների բուժման, կանխարգելման հարցերով խորհրդատվություն՝ 500 /հինգ հարյուր/ ՀՀ դրամ

12.2.Ծննդօգնություն

ա. թեթև միջամտություն՝ 1000 /մեկ հազար/ ՀՀ դրամ

բ. ծանր միջամտություն՝ 5000/ հինգ հազար/ ՀՀ դրամ

12.3.Վարակիչ հիվանդությունների նկատմամբ կենդանիների իմունականխարգելիչ պատվաստումներ և արյունառում կամ այլ նմուշառում՝ կախված կենդանու տեսակից (բացառությամբ՝ ,Գյուղատնտեսական կենդանիների պատվաստումե պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճարակային միջոցառումների)ա/ մանր կենդանիներ՝ 100 /մեկ հարյուր/ ՀՀ դրամբ/ խոշոր կենդանիներ՝ 200 /երկու հարյուր/ ՀՀ դրամ

12.4.Կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքար՝ 200 /երկու հարյուր/ ՀՀ դրամ

12.5.Ախտահանություն՝ 1 քմ 200 /երկու հարյուր/ ՀՀ դրամ

12.6.Միջատազերծում (դեզինսեկցիա)՝ 1 քմ 100 /մեկ հարյուր/ ՀՀ դրամ

12.7.Կրծողների ոչնչացում (դեռատիզացիա)՝ 1 քմ 200 /երկու հարյուր/ ՀՀ դրամ

12.8.Արհեստական սերմնավորում՝5000 /հինգ հազար/ ՀՀ դրամ

12.9.Կենդանու հերձում՝

ա/ մանր կենդանի՝ 1000 /մեկ հազար/ ՀՀ դրամ

բ/ խոշոր կենդանի՝ 3000 /երեք հազար/ ՀՀ դրամ

12.10.Կենդանու բուժում՝ կախված հիվանդության տեսակից և կենդանու տեսակից՝ 1000 /մեկ հազար/ ՀՀ դրամ

12.11.Կենդանիների նախասպանդային զննում՝ կախված կենդանու տեսակից՝
ա/մանր կենդանի՝ 1000 /մեկ հազար/ ՀՀ դրամ
բ/ խոշոր կենդանի՝ 2000 /երկու հազար/ ՀՀ դրամ

3. Սույն հավելվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված դրույքաչափերը Այնթապ համայնքի 2-րդ գոտում գտնվողների համար կիրառել՝ 0.5 գործակից.

4.Սույն հավելվածի 1-ին մասի 11-րդ կետի <<գ>> <<դ>>, <<ե>>ենթակետով սահմանված դրույքաչափերը Այնթապ համայնքի տարածքում կիրառել՝ 0.5 գործակից.

Ընթացիկ տարվա համար տեղական տուրքի և տեղական վճարի դրույքաչափերի փոփոխություն չի կարող կատարվել:

Համայնքի ղեկավար Կարեն Սարգսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅՆԹԱՊ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այնթապ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Այնթապ, (0236) 6-05-06, Ayntap_hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019թվականի N 26

ԱՅՆԹԱՊ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵՎԵՐՋԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ, ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՈՉ ՊԻՏԱՆԻ ԳՈՒՅՔԻ ԴՈՒՐՍ ԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետին համապատասխան. *համայնքի ավագանին որոշում է՝*

Հաստատել Այնթապ համայնքի 2019 թվականի տարեվերջի գույքագրման արդյունքների ամփոփման և օգտագործման համար ոչ պիտանի գույքի դուրս գրման մասին ակտերը՝ համաձայն հավելվածի

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀՈՒՆԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ

ԹԱՄՈՅԱՆ ՇԻՐԻՆ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԵՅՐԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՀԱՅԿ

ՊԱԼԵՋՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

2019Թ

ԱՌԿԱ ԳՈՒՅՔՆ ԸՍՏ ԱՇԽԱՏԱՍԵՆՅԱԿՆԵՐԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՄԵՆՅԱԿ

Հ/Հ	Գույքի անվանումը			Տ/Թ
1	Ղեկավարի սեղան	1	Կոմպ լեկտ	2012
2	Ղեկավարի սեղանի դիմաղիր սեղան	1	հատ	2012
3	Սեղան հյուրերի	1	հատ	2012
4	Կախիչ փայտյա	1	հատ	2013
5	Օդորակիչ	1	հատ	2013
6	Ջահ	2	հատ	2011
7	Քիվ	2	հատ	2011
8	VIDEO DVR	1	հատ	2013
9	Ապակեպատ փոքրիկ սեղանիկ	1	հատ	2012
10	Պահարան	1	հատ	2012
11	Փափուկ աթոռ	1	հատ	2012
12	Պահարանիկ 3 դարակով	1	հատ	2012
13	Հեռախոս	2	հատ	2011
14	Չիրկիզվող պահարան	1	հատ	1993
15	Շերտավարագույր	2	հատ	2011
16	Խոլ /բազմոց՝ 2 բազկաթոռով/	3	հատ	2014
17	Մոնիտոր	1	հատ	2016
18	Պրոցեսոր	1	հատ	2018
19	Մոնիտոր	1	հատ	2018

ԸՆԴՈՒՆԱՐԱՆ

1	Սեղան	1	հատ	2011
2	Հովացուցիչ	1	հատ	2012
3	Ներքին կապի հեռախոս	1	հատ	2013
4	Լուսամփոփ	1	հատ	2011
5	Կախիչ	1	հատ	2011
6	Պրոցեսոր	1	հատ	2016

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՍԵՆՅԱԿ

1	Գրասեղան	1	հատ	2011
2	Պահարան	1	հատ	2011
3	Փափուկ աթոռ պտտվող	1	հատ	2011
4	Աթոռ	2	հատ	1999
5	Համակարգչային սեղան	1	հատ	2007
6	Շերտավարագույր	1	հատ	2011
7	Քիվ	1	հատ	2011
8	Ջահ	1	հատ	2011
9	Կախիչ	1	հատ	2011
10	Հովացուցիչ	1	հատ	2011
11	Հեռախոս	1	հատ	2015
12	Համակարգիչ, մոնիտոր	1	հատ	2016

ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՍԵՆՅԱԿ

1	Համակարգչային սեղան	1	հատ	2007
2	Համակարգիչ, մոնիտոր	1	հատ	2018
3	Գրասեղան	1	հատ	2011
4	Պահարան	2	հատ	2011
5	Աթոռ	2	հատ	2009
6	Տպիչ սարք	1	հատ	2018
7	Պահարանիկ – տակդիր տպիչի համար	1	հատ	2011
8	Կախիչ	1	հատ	2011
9	Ջահ	1	հատ	2011
10	Հեռախոս	2	հատ	2013
11	Շերտավարագույր	1	հատ	2011
12	Քիվ	1	հատ	2011
13	Սեղանի թղթադարակ	1	հատ	2013
14	Աշխատանքային փափուկ աթոռ	1	հատ	
15	Էլ. տաքացուցիչ	1	հատ	2015
16	Հովացուցիչ	1	հատ	2015

ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՍԵՆՅԱԿ

1	Աշխատասեղան 4 հոգու համար	1	հատ	2011
2	Մոնիտոր	2	հատ	2016
3	Պրոցեսոր	2	հատ	2015
4	UPS	1	հատ	2015
5	Փափուկ աթոռ	1	հատ	2007
6	Կիսափափուկ աթոռ	2	հատ	2007
7	Չհրկիզվող պահարան	2	հատ	1987
8	Տպիչ սարք	1	հատ	2014
9	Տպիչի տակդիր	1	հատ	2011
10	Կախիչ	1	հատ	2011
11	Ջահ	2	հառտ	2011
12	Քիվ	1	հատ	2011
13	Շերտավարագույր	1	հատ	2011
14	Հովացուցիչ	1	հատ	2011
15	Ջրի սարք	1	հատ	2012

ՀԱՇՎԱՊԱՀԻ ՍԵՆՅԱԿ

1	Պահարան	1	հատ	2011
2	Մոնիտոր	1	հատ	2015
3	Պրոցեսոր P-5M	1	հատ	2015
4	Պրոցեսոր	1	հատ	2012
5	Համակարգչի սեղան	2	հատ	2008
6	Սեղանի թղթադարակ	1	հատ	2013
7	Պատին ամրացված գրադարակ	4	հատ	2011
8	Սեղան	1	հատ	2011
9	Ջահ	1	հատ	2011
10	Խոտհնձիչ	1	հատ	2017
11	Շերտավարագույր	1	հատ	2011
12	Քիվ	1	հատ	2011
13	Չհրկիզվող պահարան	1	հատ	1987
14	Կախիչ	1	հատ	2011
15	Տպիչ սարք	1	հատ	2007
16	Տպիչ սարք	1	հատ	2015
17	Մոնիտոր	1	հատ	2018

ԳՅՈՒՂԳՇՈՎ ՄԱՄՆԱԳԵՏԻ ՄԵՆՅԱԿ

1	Պատին ամրացված գրադարակ	6	հատ	2014
2	Աշխատասեղան	1	հատ	2014
3	Աթոռ	1	հատ	2007
4	Հովացուցիչ	1	հատ	2011
5	Համակարգիչ, մոնիտոր	1	հատ	2015
6	UPS	1	հատ	2015
7	Գազի կաթսա	1	հատ	2016
8	Քիվ	1	հատ	2015
9	Շերտավարագույր	1	հատ	2015

ԱՌԱՋԻՆ ՀԱՐԿԻ ՄԻՋԱՆՑՔ

1	Օդորակիչ	1	հատ	2018

ԱԿՏ

25.11.2019. գ. Այնթապ

Այնթապ համայնքի գույքագրման հանձնաժողովը հետևյալ կազմով՝Ս.Բաղդասարյան – նախագահ /գլխավոր մասնագետ/, անդամներ՝ Գ. Ավագյան / առաջին կարգի մասնագետ /, Հ.Ադամյան / առաջին կարգի մասնագետ/, ուսումնասիրելով համայնքապետարանի առկա գույքը, արձանագրում է , որ համայնքապետարանի հաշվեկշռում գտնվում է **1/մեկ/**անսարք էլեկտրական տաքացուցիչ, որը հետագա շահագործման համար պիտանի չէ, ենթակա է դուրս գրման:

Հանձնաժողովի նախագահ՝ Ս.Բաղդասարյան

Անդամներ՝ Գ. Ավագյան

Հ. Ադամյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅՆԹԱՊ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այնթապ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Այնթապ, (0236) 6-05-06, Ayntap_hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019թվականի N 27

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՀԵՐՄԻՆԵ ՈՍԿԱՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, 48-րդ հոդվածի պահանջներով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ համայնքի բնակիչ Հերմինե Ոսկանյանի վագոն-տնակը ամբողջությամբ այրվել է. **համայնք ավագանին որոշում է՝**

Առաջարկել Այնթապ համայնքի ղեկավարին նույն համայնքի բնակիչ Հերմինե Ոսկանյանի տրամադրել 100.000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ ֆինանսական օգնություն, վագոն-տնակի վերանորոգման համար :

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀՈՒՆԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ

ԹԱՄՈՅԱՆ ՇԻՐԻՆ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՍԵՅՐԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՀԱՅԿ

ՊԱԼԵՋՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅՆԹԱՊ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այնթապ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Այնթապ, (0236) 6-05-06, Ayntap_hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
27 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019թվականի N 28

ԱՅՆԹԱՊ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ԱՅՆԹԱՊ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 49 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ, 28-րդ կետերին համապատասխան և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի դրույթներով. *համայնքի ավագանին որոշում է՝*

1.Հաստատել Այնթապ համայնքի ղեկավարի աշխատավարձը՝ 360,000 /երեք հարյուր վաթսուն հազար / ՀՀ դրամ:

2.Հաստատել Այնթապի համայնքապետարանի աշխատակազմի, բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն 1, 2 և 3 հավելվածների:

3.Ուժը կորցրած ճանաչել Այնթապ համայնքի ավագանու 24 դեկտեմբերի 2018 թվականի թիվ 49<<Այնթապ համայնքի ղեկավարի, համայնքապետարանի աշխատակազմի, բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Այնթապ համայնքի ավագանու 04 դեկտեմբերի 2017 թվականի թիվ 35 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին>> որոշումը:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀՈՒՆԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ

ԹԱՄՈՅԱՆ ՇԻՐԻՆ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՍԵՅՐԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՀԱՅԿ

ՊԱԼԵՋՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված 1

Այնթապ համայնքի ավագանու

2019 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 28 որոշման

ԱՅՆԹԱՊ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ԱՅՆԹԱՊԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 28

2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԴՐՈՒՅՔԱՉԱՓ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ	ՀԱՎԵԼԱՎՃԱՐ
Համայնքի ղեկավար	1	1	360.000 ՀՀ դրամ	
ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ				
Համայնքի ղեկավարի տեղակալ	1	1	260.000 ՀՀ դրամ	
Օգնական	1	1	160.000 ՀՀ դրամ	
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ				
Աշխատակազմի քարտուղար /1.2-1/	1	1	275.000 ՀՀ դրամ	
Աշխատակազմի գլխավոր մասնագետ /2.3-1/, /2.3-2/, /2.3-3/	1	3	255.000 ՀՀ դրամ	
Աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1-1/, /3.1-2/, /3.1-3/	1	3	195.000 ՀՀ դրամ	
Աշխատակազմի առաջատար մասնագետ (սոցիալական աշխատող) 3.1-4	1	1	195.000 ՀՀ դրամ	
Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ /3.2-1/, /3.2-2/	1	2	160.000 ՀՀ դրամ	
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ				
Հարկահավաք	1	3	30 %	
Գրադարանավար	1	1	100.000 ՀՀ դրամ	
ՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ				
Հուշարձանի պահակ	1	2	95.000 ՀՀ դրամ	
Օպերատոր	1	1	120.000 ՀՀ դրամ	
Համայնքապետարանի վարորդ	1	1	140.000 ՀՀ դրամ	
Ուսանողների վարորդ	1	1	120,000 ՀՀ դրամ	
Դպրոցի վարորդ	1	1	120,000 ՀՀ դրամ	
Հավաքարար	1	1	100.000 ՀՀ դրամ	
Գործավար	1	1	120.000 ՀՀ դրամ	
Անասնաբույժ	1	1	90.000 ՀՀ դրամ	

Հարկահավաքների աշխատավարձը սահմանել հավաքագրածի 30 %-ի չափով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված 2

Այնթապ համայնքի ավագանու

2019 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 28 որոշման

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅՆԹԱՊ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ»- Ի
ՀԱՄԱՅՆՔԱՅԻ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 33
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԴՐՈՒՅՔԱՉԱՓ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ)
Տնօրեն	1	1	220.000
Մեթոդիստ ուս. Գծով տնօրենի տեղակալ	1	1	140.000
Բուժքույր	1	1	110.000
Գլխավոր հաշվապահ	1	1	120.000
Հաշվետար-գանձապահ	1	1	105.000
Տնտեսվար	1	1	100.000
Գործավար	1	1	110.000
Խոհարար	1	1	110.000
Խոհարարի օգնական	1	1	110.000
Օժանդակ բանվոր	1	1	90,000
Շենքերի,սարքավորումների սպասարկող և նորոգող բանվոր	1	1	90,000
Երաժիշտ	1	1	140,000
Լվացարար /շուրջօրյա հաճախում չունեցող մանկապարտեզում	1	1	100,000
Հավաքարար	1	1	110,000
Դաստիարակ	1	6	155,000
Դաստիարակի օգնական	1	6	115,000
Գիշերային պահակ	1.5	1	100,000
Անգլերեն լեզվի դաստիարակ	0.5	1	155,000
Պարուսույց	0.5	1	155,000
Ֆիզկուլտուրայի հրահանգիչ	0.5	1	155,000
Հոգեբան	0.5	1	155,000
Դերձակ	0.5	1	130,000
Դռնապահ	1	1	90,000

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված 3

Այնթապ համայնքի ավագանու

2019 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 28 որոշման

« ԱՅՆԹԱՊ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ»- Ի ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 19
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԴՐՈՒՅՔԱՉԱՓ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ)
Տնօրեն	1	1	80.000
Բժիշկ	1	4	218.000
Բուժքույր ընտանեական	1	3	95.000
Բուժքույր ընտանեական	1	1	100.000
Բուժքույր պրոցեդուրայի	1	1	81.000
Բուժքույր իմունիզացիայի	1	1	73.000
Բուժքույր դպրոցի	1	1	74.000
Մատենավար	1	1	78.000
Մանկաբարձ	1	1	78.000
Լաբորանտ	1	1	73.000
Օպերատոր	1	1	100.000
Վարորդ	1	1	95.000
Հաշվապահ	1	1	130.000
Հավաքարար	1	1	73.000

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅՆԹԱՊ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այնթապ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Այնթապ, (0236) 6-05-06, Ayntap_hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019թվականի N 29

ԱՅՆԹԱՊ ՀԱՄԱՅՆՔԻ 16-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 35/5 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0,01102 ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԱՅԼ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով , Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով համայնքի բնակիչներ Օնիկ Ղևոնդյանի, Վանիկ Ղևոնդյանի և Գրիգոր Ղևոնդյանի դիմումը. **համայնքի ավագանին որոշում է՝**

1.Ուղղակի վաճառքի կարգով Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այնթապ համայնքի 16-րդ փողոց թիվ 35/5 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 0,01102 հա բնակավայրերի այլ հողամասը /ծածկագիր 03-012-0089-0029/, 136.900 ՀՀ դրամ կադաստրային արժեքով օտարել Օնիկ Ղևոնդյանին, Վանիկ Ղևոնդյանին և Գրիգոր Ղևոնդյանին:

2. Այնթապ համայնքի համայնքային սեփականությունհանդիսացող 0,01102 հա բնակավայրերի այլ հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ:

3. Սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Օնիկ Ղևոնդյանի, Վանիկ Ղևոնդյանի և Գրիգոր Ղևոնդյանի կողմից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀՈՒՆԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ

ԹԱՄՈՅԱՆ ՇԻՐԻՆ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՍԵՅՐԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՀԱՅԿ

ՊԱԼԵՋՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԿԱՐԵՆ ՄԱՐԳՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅՆԹԱՊ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այնթապ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Այնթապ, (0236) 6-05-06, Ayntap_hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019թվականի N 30

ԱՅՆԹԱՊ ՀԱՄԱՅՆՔԻ 300 ՏԵՂԱՆՈՑ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ՏԱՆԻՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՄԵԿ ԱՆՁԻ ԳՆԱՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով գնումների մասին ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-ն որոշմամբ հաստատված կարգի 23-րդ կետի 5-րդ ենթակետի բև գ պարբերության պահանջներով. **համայնքի ավագանին որոշում է՝**

Քանի որ առաջացել է գնման անհետաձգելի պահանջ՝ թույլատրել Այնթապ համայնքի 300 տեղանոց մշակույթի տան տանիքի մասնակի կառուցման աշխատանքների մրցույթը իրականացնել մեկ անձի գնման ընթացակարգով:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀՈՒՆԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ

ԹԱՄՈՅԱՆ ՇԻՐԻՆ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՍԵՅՐԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՀԱՅԿ

ՊԱԼԵՋՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ